Արձանագրություն N4

Մարտունու Ծննդատուն ՊՓԲԸ-ի ՄԾՊՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ19/3 ծածկագրով քիմիական նյութերի որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Մարտունի

12 փետրվար 2019թ.
Ժամը՝ 16^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սիրարփի Հովհաննիսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Աշոտ Հովհաննիսյան

Գոհար Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վարդուհի Սարգսյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
2.Նիստի կասեցման մասին,
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝0

1.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փասթաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին.

Ընդունել ի գիտություն, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները , Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, ինչպես նաև ակտիվները գերազանցում են պարտավորությունները:

ՄԾՊՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի միջոցով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել իրենց որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերի II մասի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայցված փաստաթղթերի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերին և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին բացառությամբ Ֆարմեգուս ՍՊԸ-ի / ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում տվյալ մրցույթի պահանջներին/ և Թագ ՀԷՄ ՍՊԸ-ի /չի ներկայացրել հավելված 2/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

2.Նիստի կասեցման մասին

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի մասին 47-րդ կետի համաձայն կասեցնել նիստը՝առաջարկելով Ֆարմեգուս ՍՊԸ-ին և ԹագՀԷՄ ՍՊԸ-ին հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթում առկա անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

ՄԾՊՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել փետրվարի 14 -ին, ժամը 15:00-ին Մարտունու Ծննդատուն ՊՓԲԸ-ի գնումների բաժնում՝ ք. Մարտունի, Գետափնյան 2/18 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

Հանձնաժողովի նախագահ՝ Սիրարփի Հովհաննիսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Աշոտ Հովհաննիսյան

Գոհար Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վարդուհի Սարգսյան